

1.2.2. **Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2003թ. հունվար-ապրիլին, ընթացիկ գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7600 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 45.1 մլրդ.դրամ,որը 2002թ. մակարդակը գերազանցել է 4.8%-ով: 2003թ. ապրիլի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է. մարտի 105.4%-ը:

Հանրապետությունում շարունակվում են գարնանացան մշակաբույսերի ցանքի աշխատանքները: 2003թ. մայիսի 1-ի դրությամբ հանրապետությունում կատարվել է 21544 հեկտար գարնանացան մշակաբույսերի ցանք, որը 2002թ. մակարդակը գիջել է 12227 հեկտարով, կամ 36.2%-ով:

**Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի գարնանացանի ընթացքը հանրապետությունում 2003թ. մայիսի 1-ի դրությամբ**

*(հեկտար)*

Մշակաբույսերի անվանումը	Ցանվել են		2003թ. 2002թ. նկատմամբ, %
	2003թ.	2002թ.	
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	15023	21197	70.9
Կարտոֆիլ	3233	8134	39.7
Բանջարանոցային մշակաբույսեր	2327	2748	84.7
Բոստանային մշակաբույսեր	291	423	68.8
Կերային մշակաբույսեր	616	1231	50.0
Այլ մշակաբույսեր	54	38	142.1
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>21544</b>	<b>33771</b>	<b>63.8</b>

**Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2003թ. մայիսի 1-ի դրությամբ**

*(հաշվարկային տվյալներ)*

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) <sup>1</sup> , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %
ք.երևան	0.1	100.0	0.8	114.3	15.1	104.9
Արագածոտն	2.4	109.1	13.4	103.9	7.0	155.6
Արարատ	1.9	100.0	8.7	96.7	9.6	162.7
Արմավիր	2.8	175.0	7.6	102.7	10.0	172.4
Գեղարքունիք	3.4	100.0	20.7	97.6	9.7	170.2
Լոռի	2.2	110.0	13.8	102.2	6.5	203.1
Կոտայք	2.1	105.0	11.8	103.5	67.3	106.3
Շիրակ	3.1	110.7	17.4	106.1	9.1	156.9
Սյունիք	1.7	113.3	9.9	101.0	4.2	155.6
Վայոց ձոր	0.8	100.0	4.5	97.8	3.4	161.9
Տավուշ	1.7	106.3	8.1	96.4	4.8	111.6
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>22.2</b>	<b>108.3</b>	<b>116.7</b>	<b>101.2</b>	<b>146.7</b>	<b>124.7</b>

2003թ. հունվար-ապրիլին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2002թ. ցուցանիշը 1.7 հազ. տոննայով կամ 8.3%-ով, կաթի արտադրությունը՝ 1.4 հազ. տոննայով կամ 1.2%-ով, ձվինը՝ 29.1 մլն. հատով կամ 24.7%-ով:

<sup>1</sup> *Ներառյալ ներքին սպառումը*  
 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-ապրիլին»